



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄԼՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 06(346) «16» ապրիլի2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
82	«Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-1-Ն օրենքը.....	4
83	««Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-2-Ն օրենքը.....	24
84	««Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-3-Ն օրենքը.....	25
	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
85	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 12-ի N 99-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 231-Ն որոշումը.....	26
86	«Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կանոնադրությունները հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 241-Ն որոշումը.....	28
87	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 242-Ն որոշումը.....	53
88	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 243-Ն որոշումը.....	55
89	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001	

	թվականի օգոստոսի 22-ի N 222 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 244-Ն որոշումը.....	58
90	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 58-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 245-Ն որոշումը.....	60
91	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 28-ի N 283 և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 29-ի N 488 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 246-Ն որոշումը.....	61
92	«Որոշ ապրանքատեսակների ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության և շահութահարկով հարկման նպատակով դրանց մատակարարումից ստացվող եկամտի որոշման նպատակով ճշգրտվող տվյալները, այդ տվյալների ճշգրտման առավելագույն սահմանները և ապրանքի միավորի հաշվարկային գնի որոշման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 28-ի N 592 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 247-Ն որոշումը.....	67
93	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 248-Ն որոշումը.....	73
94	«Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2012» թվազրմամբ ակցիզային դրոշմանիշները կիրառությունից հանելու և այդ դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումն արգելելու մասին» ԱՀ կառավարության N 249-Ն որոշումը.....	75
95	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 335-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 250-Ն որոշումը.....	76
96	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի N 235-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 251-Ն որոշումը.....	77
97	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի N 713 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 256-Ն որոշումը.....	85
98	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 264-Ն որոշումը.....	92

99	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 265-Ն որոշումը.....	93
100	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 266-Ն որոշումը.....	94
101	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 918-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 270-Ն որոշումը.....	95

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
մարտի 29-ին

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-61-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔ»:

Հոդված 2. Օրենսգրքի ամբողջ տեքստում «բնության և շրջակա միջավայր» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «շրջակա միջավայր» բառերով և դրանց հոլովաձևերով:

Հոդված 3. Օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասը «կարգավորվում են» բառերից հետո լրացնել «ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը «ընդերքի օգտագործում» բառերից հետո լրացնել «կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում» բառերով.

2) 7-րդ կետը «հանածոների արդյունահանման» բառերից հետո լրացնել «և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման» բառերով.

3) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) **արտադրական լցակույտեր**՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ Լեռնային փոքրածառերում.».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1-28.4-րդ կետեր.

«28.1) **շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ**՝ կենտրոնական գանձապետարանում լիազոր մարմնի անվամբ բացված արտաբյուջետային հաշվին ընդերքօգտագործողների հատկացրած գումարներ, որոնք ուղղվում են սույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված նպատակների իրականացմանը.

28.2) **ֆինանսական երաշխիք**՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների մշակման օբյեկտների շահագործման, փակման, փակումից հետո օրենքով նախատեսված միջոցառումների իրականացման,

թափոնների վերամշակման, օգտագործման կամ վնասագերծման, ինչպես նաև նշված գործողությունների արդյունքում առաջացող թերությունների կամ պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով կառավարության սահմանած չափանիշները բավարարող իրավաբանական անձանց կողմից տրվող և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացվող երաշխիք:

28.3) **Ֆինանսական այլ առաջարկներ և երաշխիքներ**՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստանալու նպատակով ներկայացվող ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք ներառում են մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ:

28.4) **հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքներ**՝ ֆինանսական երաշխիքներ, որոնք ներկայացվում են հանքի փակման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով:».

5) 29-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

6) 36-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 37-46-րդ կետեր:

«37) **պոչանքներ**՝ պինդ կամ կիսահեղուկ թափոններ, որոնք առաջանում են օգտակար հանածոների մշակման (այդ թվում՝ մանրացման, աղացման, չափային տեսակավորման, հարստացման և այլ ֆիզիկաքիմիական տեխնոլոգիաների կիրառման) ընթացքում:

38) **ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ**՝ տարածք, տեղ, ներառյալ՝ ցանկացած պատվար կամ որևէ այլ կառույց (ներառյալ՝ պոչամբարները), որը նախատեսված է տարածքն իր մեջ պարունակելու, սահմանափակելու կամ այլ կերպ որպես հենարան պահելու նպատակով, որտեղ հավաքվում, կուտակվում, պահվում, հեռացվում, վնասագերծվում, տեղադրվում կամ թաղվում են ընդերքօգտագործման թափոնները (պինդ, հեղուկ կամ կիսահեղուկ վիճակում): Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չեն հանդիսանում այն տարածքները (ներառյալ՝ փորված հորերը), որտեղ ընդերքօգտագործման թափոնները տեղափոխվել են օգտակար հանածոյի արդյունահանումից հետո՝ վերականգնման կամ շինարարական նպատակներով: Վերջիններս հանդիսանում են թափոններ «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի իմաստով, և դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

39) **ընդերքօգտագործման վտանգավոր թափոններ**՝ ընդերքօգտագործման թափոններ, որոնք իրենց ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության և շրջակա միջավայրի համար, և պահանջվում են դրանց հետ վարվելու հատուկ մեթոդներ, եղանակներ, միջոցներ:

40) **ընդերքօգտագործման թափոնների կառավարում**՝ ընդերքօգտագործման թափոնների հավաքման, փոխադրման, վնասագերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման, մշակման, օգտահանման գործողություններ, որոնք ուղղված են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների կառավարման միջոցով

շրջակա միջավայրի կամ մարդու առողջության վրա ընդերքօգտագործման թափոնների բացասական ազդեցության հնարավորության դեպքում կանխմանը կամ հնարավորինս նվազեցմանը.

41) **ընդերքօգտագործման թափոնների վերամշակում**՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացում, որոնք կապված են թափոնների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ, և որի նպատակն է ընդերքօգտագործման թափոններից օգտակար հանածոյի կորզումը, այդ թվում՝ դրա չափերի փոփոխումը, դասակարգումը, առանձնացումը, թափոնների վերամշակումը.

42) **ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտ**՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներ, որտեղ գտնվող ընդերքօգտագործման թափոնները ենթարկվում են մշակման, վերամշակման կամ օգտահանման.

43) **ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման համապարփակ փաստաթուղթ, որը նկարագրում է ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում թափոնների հավաքման, փոխադրման, վնասագերծման, կուտակման, պահման, հեռացման, տեղադրման, թաղման այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացման համար: Ընդ որում, ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը մշակում և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին են ներկայացնում բոլոր ընդերքօգտագործողները.

44) **ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլան**՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համապարփակ փաստաթուղթ, որը նկարագրում է ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների կառավարման և դրանցում գտնվող ընդերքօգտագործման թափոնների կառավարման, մշակման, վերամշակման կամ օգտահանման այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են սույն օրենսգրքով նախատեսված նպատակների իրականացման համար: Ընդ որում, ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլան մշակում և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին են ներկայացնում միայն այն ընդերքօգտագործողները, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոնները.

45) **լավագույն հնարավոր տեխնոլոգիա**՝ սույն օրենսգրքով նախատեսված գործունեության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և մեթոդների ամբողջություն, որոնք հնարավորինս կանխում կամ նվազագույնի են հասցնում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները, այդ թվում՝ շրջակա միջավայր վտանգավոր նյութերի արտանետումները.

46) **նախնական պայմանագիր**՝ լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջև կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման

հայտը և երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետները:»:

Հոդված 5. Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում 10-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում պետական վերահսկողություն՝ բնակչության անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության ապահովման նպատակով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 14-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենսգրքի 15-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում՝

ա. «պահպանության» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության» բառերը,

բ. 16-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-27-րդ կետեր.

«17) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի գործունեության կարգի սահմանումը.

18) լիազոր մարմնի և ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցութում հաղթող ճանաչված անձի միջև կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձևի սահմանումը.

19) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգի սահմանումը.

20) ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգի սահմանումը.

21) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցմանը ներկայացվող տեխնիկական պահանջների և չափանիշների սահմանումը.

22) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը և վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջների և չափանիշների սահմանումը.

23) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգի սահմանումը.

24) լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչների սահմանումը.

25) ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանների՝ ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցման կարգի սահմանումը.

26) ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշների սահմանումը.

27) սույն օրենսգրքով նախատեսված այլ միջոցառումների իրականացումը:»:

2) 3-րդ մասի 19-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ և 21-րդ կետեր.

«20) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային փաթեթի կազմումը.

21) մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձի հետ նախնական պայմանագրի կնքումը:».

3) 4-րդ մասի 8-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-14-րդ կետեր.

«9) ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրման կարգի մշակումը.

10) ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության դասակարգման կարգի մշակումը.

11) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառավարմանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարմանը և վերամշակմանը ներկայացվող տեխնիկական պահանջների և չափանիշների մշակումը.

12) լավագույն հնարավոր տեխնոլոգիաներին ներկայացվող չափորոշիչների մշակումը.

13) օգտակար հանածոյի մշակման համար անհրաժեշտ վտանգավոր նյութերի օգտագործման առավելագույն սահմանաչափերի որոշման ընթացակարգի հաստատումը.

14) սույն օրենքով նախատեսված այլ իրավասություններ:»:

Հոդված 8. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասը «սահմանված» բառից հետո լրացնել «ընդհանուր հիմունքներով կամ մրցութային» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին և 20.2-րդ հոդվածներով.

«Հոդված 20.1. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը մրցութային կարգով

1. Ընդերքօգտագործման իրավունքը մրցութային կարգով տրամադրվում է բացառապես ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության դեպքում:

2. Մրցույթի մասնակցության հայտերին, մրցույթի մասնակիցների որակավորմանը, ֆինանսական և տեխնիկական կարողություններին ներկայացվող չափորոշիչները, ինչպես նաև մրցութային փաթեթների պատրաստման կարգը սահմանում է կառավարությունը:

3. Ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու համար մրցույթի մասնակցության հայտը ներկայացվում է լիազոր մարմին՝ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

4. Մինչև մրցույթի կազմակերպումը լիազոր մարմնի և ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների սեփականատիրոջ միջև կնքվում է հողօգտագործման նախնական պայմանագիր, որով սահմանվում է ընդերքօգտագործողի կողմից՝ հողամասի օգտագործման վճարի և ընդերքօգտագործման հետևանքով հողամասի սեփականատիրոջը պատճառվելիք վնասի և բաց թողնված օգուտի չափի փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Մրցույթը կազմակերպվում, անցկացվում և բողոքարկվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, սույն օրենսգրքի և «Հրապարակային սակարկությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

Հոդված 20.2. Մրցույթի արդյունքների ամփոփումը

1. Մրցույթների կազմակերպման և անցկացման նպատակով լիազոր մարմինը ստեղծում է մրցութային հանձնաժողով:

2. Մրցույթում հաղթող անձը որոշվում է մրցութային առաջարկությունների քննարկման արդյունքով՝ հետևյալ չափանիշների հիման վրա.

1) ընդերքօգտագործման ոլորտում հայտատուի նմանատիպ աշխատանքների փորձը, ընդերքօգտագործման առաջարկվող ծրագիրը, նորագույն մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը, միջազգային փորձը, նախատեսվող ներդրումների ծավալը, իրականացվելիք աշխատանքների ժամկետները, ստեղծվելիք աշխատատեղերի քանակը.

2) մրցույթի մասնակիցների կողմից առաջարկվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության, բնակչության առողջության անվտանգության և տեխնիկական անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները.

3) մրցույթի մասնակիցների որակավորումը, ֆինանսական և տեխնիկական կարողությունները.

4) մրցույթին չեն կարող մասնակցել սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետում նշված անձինք:

3. Մրցույթի արդյունքների ամփոփման կարգը սահմանում է մրցույթի կազմակերպիչը:

4. Մրցույթի մյուս մասնակիցների պահանջով 10-օրյա ժամկետում տրամադրվում է արձանագրության կրկնօրինակը:

5. Մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչված անձի հետ մրցույթի արդյունքների ամփոփումից հետո՝ 15-օրյա ժամկետում, լիազոր մարմինը կնքում է նախնական պայմանագիր, որով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և երկրաբանական ուսումնասիրության նյութերը փորձաքննության ներկայացնելու ժամկետները:

6. Մրցույթում հաղթող ճանաչված անձը նախնական պայմանագրով սահմանված ժամկետում դիմում է լիազոր մարմին՝ ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար՝ դիմումին կից ներկայացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-4-րդ մասերով և 40-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Եթե շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը բացասական է, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է մրցույթում հաղթող ճանաչված անձին ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը:»:

Հոդված 10. Օրենսգիրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում 4-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) հաշվետվություն ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ:»:

Հոդված 11. Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում 2-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:»:

Հոդված 12. Օրենսգրքի 39-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը «ծրագիրը և այն» բառերից հետո լրացնել «սույն օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերի հետ միասին» բառերով.

2) 7-րդ մասում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին, 5.2-րդ կետեր.

«5.1) դիմումատուի ներկայացրած ֆինանսական երաշխիքը բավարար չէ ապահովելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

5.2) ֆինանսական երաշխիքը տվել է այն իրավաբանական անձը, որը չի համապատասխանում կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին.».

բ. 8-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երևակման տեղամաս:»:

Հոդված 13. Օրենսգրքի 40-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում 8-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9) ֆինանսական երաշխիքի կատարման պահանջ ներկայացնելու կարգը և պայմանները:».

2) 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Երկրաբանական ուսումնասիրության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-4-րդ և 7-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 15. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընդերքի տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-4-րդ և 7-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 16. Օրենսգրքի 43-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխության համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 17. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին կետով.

«6.1) իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումները:»:

Հոդված 18. Օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում 10-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները:»:

Հոդված 19. Օրենսգրքի 50-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «նախագիծը» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը)» բառերով.

2) 5-րդ մասի 7-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ և 9-րդ կետեր.

«8) դիմումատուի ներկայացրած ֆինանսական երաշխիքը բավարար չէ ապահովելու ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումը.

9) ֆինանսական երաշխիքը տվել է այն իրավաբանական անձը, որը չի համապատասխանում կառավարության սահմանած՝ ֆինանսական երաշխիք տվող իրավաբանական անձանց ներկայացվող չափանիշներին:»:

Հոդված 20. Օրենսգրքի 53-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 4-րդ մասում 10-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետ.

«11) ֆինանսական երաշխիքի կատարման պահանջ ներկայացնելու կարգը և պայմանները:»:

Հոդված 21. Օրենսգրքի 54-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 22. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 23. Օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխության համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված կանոնները:»:

Հոդված 24. Օրենսգրքի 58-րդ հոդվածի 3-րդ մասում 15-րդ կետի վերջակետը փոխարինել միջակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-18-րդ կետեր.

«16) ապահովել հանքի փակման ծրագրի իրականացումը.

17) ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը.

18) իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումները:»:

Հոդված 25. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 5.1

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱ-
ԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇՇԱԿՈՒՄԸ: ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇՇԱԿՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ

Հոդված 59.1. Ընդհանուր պահանջները

1. Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում են՝

1) վնաս չպատճառելով մարդկանց առողջությանը.

2) կիրառելով այնպիսի գործընթացներ կամ տեխնոլոգիաներ, որոնք նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրին՝ ջրին, մթնոլորտային օդին, հողին, կենդանական և բուսական աշխարհին պատճառվող վնասը.

3) հնարավորինս նվազագույնի հասցնելով լանդշաֆտի կամ հատուկ նշանակության վայրերի՝ պատմամշակութային, էթնոգրաֆիկ, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցությունը:

2. Ընդերքօգտագործողները հանքի շահագործման ընթացքում և հանքի փակումից հետո պարտավոր են իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումներ՝ շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված միջոցառումները պետք է իրականացվեն առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն տնտեսական գործունեության կիրառմամբ՝ հաշվի առնելով ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտների տեխնիկական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը և բնապահպանական պայմանները:

Հոդված 59.2. Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը

1. Ընդերքօգտագործման թափոնների կառավարումն իրականացվում է ընդերքօգտագործողների կողմից և նրանց միջոցներով՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանին համապատասխան:

2. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում է այն ընդերքօգտագործողների կողմից, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոններ և այդ նպատակով սույն Օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով ներկայացրել են համապատասխան դիմում:

3. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում է ընդերքօգտագործողների միջոցներով՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանին համապատասխան:

4. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը սահմանում է կառավարությունը:

5. Այն ընդերքօգտագործողները, որոնք վերամշակում են ընդերքօգտագործման թափոններ, իրականացնում են միայն ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումներ:

Հոդված 59.3. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները

1. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները պետք է կազմվեն՝ հետևելով թափոնների առաջացումը և դրանց վնասակարությունը հնարավորինս նվազեցնելու սկզբունքին, հատկապես հաշվի առնելով՝

1) ընդերքօգտագործման թափոնների կառավարումը նախագծման փուլում և հանքարդյունահանման ու մշակման համար օգտագործվող մեթոդների ընտրություն կատարելիս.

2) օգտակար հանածոյի արդյունահանումից հետո ընդերքօգտագործման թափոնները ստորերկրյա խոռոչ կրկին փոխադրելը (եթե այդպիսիք կան) որքան հնարավոր է տեխնիկական և տնտեսական առումով և ընդունելի բնապահպանական տեսանկյունից.

3) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակումից հետո ռեկուլտիվացումը.

4) օգտակար հանածոյի մշակման համար առավել քիչ վտանգավոր նյութերի օգտագործումը.

5) ընդերքօգտագործման թափոններից արժեքավոր նյութերի ստացմանը նպաստելը այդպիսի թափոնների օգտահանման, բազմակի օգտագործման կամ վերամշակման միջոցով, եթե դա ընդունելի է բնապահպանական տեսանկյունից.

6) ընդերքօգտագործման թափոնների անվտանգ հեռացման ապահովումը կարճաժամկետ և երկարաժամկետ, մասնավորապես՝ նախագծման փուլում օբյեկտի գործունեության ընթացքում և դրա փակումից հետո կառավարումը և ընտրելով այնպիսի նախագիծ, որը՝

ա. պահանջում է ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտի դիտանցում, հսկողություն և կառավարում նվազագույն չափով և հնարավորության դեպքում՝ դրանց բացառում,

բ. հնարավորինս նվազագույնի է հասցնում շրջակա միջավայրի (օդ, հող, ջրային ռեսուրսներ, ինչպես նաև բուսական, կենդանական աշխարհ) վրա և բացառում է հարակից ազդակիր համայնքների բնակչության առողջության վրա բացասական ազդեցությունները,

գ. ապահովում է նախկինում գոյություն ունեցած՝ հողի մակերևույթից ավելի բարձր խոյացող պատվարների կամ թափոնակույտի գեոտեխնիկական երկարաժամկետ կայունությունը.

7) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի դասակարգման առանձնահատկությունները:

2. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները սահմանում է կառավարությունը:

3. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անցկացման ընթացքում դիտարկում է նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների իրագործելիությունը:

4. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները կարող են փոփոխվել՝ կախված դրանց կառավարման կամ մշակման առանձնահատկություններից: Ընդ որում, ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններն ենթակա են պարտադիր վերանայման յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փոփոխված պլանները ներկայացվում են ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի համաձայնեցմանը: Համաձայնեցման կարգը սահմանում է կառավարությունը:

6. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանների և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների օրինակելի ձևերը հաստատում է կառավարությունը:

7. Ընդերքօգտագործման թափոնների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների՝ ըստ վտանգավորության աստիճանի դասակարգման կարգը հաստատում է կառավարությունը:

Հոդված 59.4. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների ֆինանսական երաշխիքները

1. Ընդերքօգտագործողը ընդերքօգտագործման իրավունք ձեռք բերելու դիմումի հետ լիազոր մարմին է ներկայացնում ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովման համար ֆինանսական երաշխիքներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ֆինանսական երաշխիքի գումարի հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումները:

3. Ընդերքօգտագործողները պետք է սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված լիազոր մարմիններ ներկայացնեն միայն կառավարության սահմանած չափանիշները բավարարող իրավաբանական անձանց տված ֆինանսական երաշխիքներ:

4. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների փոփոխության դեպքում փոփոխվում է նաև ֆինանսական երաշխիքի չափը:

5. Սույն հոդվածով նախատեսված ֆինանսական երաշխիքը կարող է տրամադրվել առավելագույնը հինգ տարի ժամկետով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ ընդերքօգտագործողը ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում ֆինանսական նոր երաշխիք կամ ֆինանսական երաշխիքի ժամկետի երկարաձգման մասին ֆինանսական երաշխիք տված իրավաբանական անձի պատշաճ վավերացրած փաստաթուղթ:

7. Եթե ընդերքօգտագործողը սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետում չի ներկայացնում ֆինանսական նոր երաշխիք կամ ֆինանսական երաշխիքի ժամկետի երկարաձգման վերաբերյալ պատշաճ վավերացված փաստաթուղթ, ապա ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը դիմում է ֆինանսական երաշխիք տրամադրած իրավաբանական անձին՝ պահանջելով վճարել ֆինանսական երաշխիքով նախատեսված ամբողջ գումարը՝ ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով:

8. Ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը:

Հոդված 59.5. Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների չիրականացման համար զգուշացումը և ֆինանսական երաշխիքով նախատեսված գումարի վճարման պահանջ ներկայացնելը

1. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումներն իրականացնող ընդերքօգտագործողին տալիս է գրավոր զգուշացում, եթե վերջինս չի կատարում համապատասխան պլաններով նախատեսված պարտավորությունները:

2. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն իրավունք չունի ֆինանսական միջոցի հատկացման պահանջ ներկայացնելու ընդերքօգտագործողին կամ ֆինանսական երաշխիք տված անձին, եթե ընդերքօգտագործողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ 60 օրվա ընթացքում, վերացրել է խախտումները:

3. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը ֆինանսական երաշխիքով նախատեսված գումարի վճարման պահանջ կարող է ներկայացնել ինչպես ընդերքօգտագործողին, այնպես էլ ֆինանսական երաշխիք տված անձին:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված գումարի վճարման պահանջ կարող է ներկայացվել, եթե ընդերքօգտագործողը

1) ամբողջությամբ կամ մասնակիորեն չի կատարել ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված պարտավորությունները և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում չի վերացրել համապատասխան խախտումները.

2) ֆինանսական երաշխիքի ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ չի ներկայացրել ֆինանսական նոր երաշխիք կամ ֆինանսական երաշխիքի երկարաձգման վերաբերյալ պատշաճ վավերացված փաստաթուղթ:

5. Ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը ֆինանսական միջոցների հատկացման պահանջի մեջ պետք է նշի, թե որ պարտավորությունն է խախտել ընդերքօգտագործողը:

6. Ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին պահանջը պետք է ընդերքօգտագործողին կամ ֆինանսական երաշխիք տված անձին ներկայացվի գրավոր՝ կցելով անհրաժեշտ հիմնավորումները: Սույն կետով նախատեսված պահանջը պետք է պարունակի նաև պահանջվող գումարի չափը և նշված գումարի հաշվարկ-հիմնավորումները:

7. Ֆինանսական միջոցների հատկացման պահանջը ընդերքօգտագործողին կամ ֆինանսական երաշխիք տված անձին ներկայացվելու դեպքում այն պետք է քննարկվի, և համապատասխան գումարը վճարվի 10-օրյա ժամկետում:

8. Սույն հոդվածով նախատեսված ֆինանսական միջոցների հատկացման պահանջ ներկայացվելու դեպքում ընդերքօգտագործողը կամ ֆինանսական երաշխիք տված անձը համապատասխան գումարը փոխանցում է ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի անվամբ գանձապետական միասնական հաշվում բացված արտաբյուջետային հաշվին:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված գումարը ընդերքի օգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվին փոխանցվելուց հետո վերջինս այդ միջոցների հաշվին սկսում է կատարել ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումները:

Հոդված 59.6. Տեղեկատվությունը և կանխարգելումը

1. Ընդերքօգտագործողը պատասխանատվություն է կրում ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների անվտանգության ապահովման, անվտանգության կառավարման ընթացակարգերի մշակման և կիրառման, ինչպես նաև անվտանգության բարձրացման և ռիսկերի նվազեցման տեխնոլոգիական և կառավարչական համակարգերի օգտագործման համար:

2. Վթարների առաջացման վտանգները և դրանց առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն թափոնների օբյեկտների նախագծման, կառուց-

ման, աշխատանքի ու պահպանման ժամանակ, ինչպես նաև դրանք փակելիս ու փակումից հետո վթարները կանխարգելելու և մարդու առողջության և (կամ) շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական հետևանքները բացառելու նպատակով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջի կատարման նպատակով յուրաքանչյուր ընդերքօգտագործող, նախքան ընդերքօգտագործման գործունեության մեկնարկը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման, ինչպես նաև սույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում ընդերքօգտագործման թափոնների վերամշակման համար՝

1) մշակում է վթարների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և գործողության մեջ դնում դրա իրականացումն ապահովող անվտանգ կառավարման համակարգ:

2) մշակում է արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը՝ համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների:

3) իրականացնում է արտակարգ իրավիճակներին արձագանքելու ներքին ծրագիր՝ նշելով այն միջոցները, որոնք վթարի դեպքում ձեռնարկվելու են:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով ընդերքօգտագործողը նշանակում է անվտանգության հարցերով կառավարիչ կամ ստեղծում ստորաբաժանում, որը պատասխանատվություն է կրում վթարների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ու պարբերական վերահսկողության համար՝ համաձայն արտակարգ իրավիճակներում գործելու պլանի:

5. Արտակարգ իրավիճակներում գործելու պլանի բովանդակության և դրա մշակման մեթոդական ուղեցույցը սահմանում է արտակարգ իրավիճակների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

6. Արտակարգ իրավիճակներում գործելու պլանի հիմնական նպատակներն են՝

1) վթարների և այլ միջադեպերի սահմանում, նկարագրում ու հսկողություն՝ դրանց հետևանքները նվազեցնելու, մասնավորապես մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցվող վնասները հնարավորինս չեզոքացնելու կամ նվազեցնելու համար:

2) վթարների և այլ միջադեպերի ազդեցություններից մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում:

3) տվյալ տարածաշրջանում հանրությանը և համապատասխան ծառայություններին կամ մարմիններին անհրաժեշտ տեղեկությունների հաղորդում:

4) վթարներից հետո շրջակա միջավայրի վերականգնման ու մաքրման աշխատանքների նախատեսում:

7. Վթարների դեպքում ընդերքօգտագործողը բնապահպանության, առողջապահության և արտակարգ իրավիճակների լիազոր մարմիններին անհապաղ տրամադրում է այն տեղեկատվությունը, որ պահանջվում է մարդու առողջության համար դրանց հետևանքները նվազեցնելու և բնապահպանա-

կան վնասի չափը գնահատելու ու փաստացի կամ հնարավորինս նվազեցնելու համար:

8. Վթարների դեպքում մարդու առողջության համար դրանց հետևանքների նվազեցմանը և բնապահպանական վնասի չափի գնահատմանը և վնասի փաստացի կամ հնարավորինս նվազեցմանը վերաբերող տեղեկատվությանը ներկայացվող պահանջները և տեղեկատվության տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը:

9. Առողջապահության ոլորտի լիազոր մարմինը կարող է մասնակցել արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ու վերանայման գործընթացին: Սույն մասով նախատեսված գործընթացներին մասնակցելու նպատակով արտակարգ իրավիճակների լիազոր մարմինը առողջապահության ոլորտի լիազոր մարմնին տեղեկացնում է համապատասխան աշխատանքների իրականացման մասին՝ տրամադրելով տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու ընթացակարգի և այն լիազոր մարմինների մասին, որոնք պետք է ներգրավվեն գործընթացին:

10. Ազդակիր համայնքների բնակչությունը պետք է մասնակցելու հնարավորություն ունենա արտակարգ իրավիճակներում գործելու պլանի մշակման ու վերանայման գործընթացներին: Սույն մասով նախատեսված գործընթացներին մասնակցելու նպատակով արտակարգ իրավիճակների լիազոր մարմինը ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնում է համապատասխան աշխատանքների իրականացման մասին՝ տրամադրելով տեղեկություններ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու ընթացակարգի և այն լիազոր մարմինների մասին, որոնց կարող են ներկայացվել դիտողություններ և հարցեր: Ազդակիր համայնքների բնակչությունը պետք է ունենա ողջամիտ ժամկետներում առաջարկություններ ներկայացնելու հնարավորություն, և համապատասխան որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնվեն ազդակիր համայնքի բնակչության ներկայացրած առաջարկությունները:

11. Վթարների դեպքում պահանջվող գործողությունների մասին տեղեկություններն անվճար տրամադրվում են ազդակիր համայնքների բնակչությանը, և այդ տեղեկատվությունը վերանայվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ և անհրաժեշտության դեպքում՝ թարմացվում:

12. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված ազդակիր համայնքի բնակչությանը տեղեկացնելու, ազդակիր համայնքի բնակչության կողմից առաջարկություններ ներկայացվելու և այդ առաջարկությունների քննարկման կարգը սահմանում է արտակարգ իրավիճակների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

Հոդված 59.7. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների կառուցումն ու կառավարումը

1. Ընդերքօգտագործման թափոնների նոր օբյեկտ կառուցելիս կամ գոյություն ունեցող օբյեկտը փոփոխության ենթարկելիս ընդերքօգտագործողը պարտավոր է՝

1) հաշվի առնել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածքի երկրաբանական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, սեյսմիկ ու գետտեխնիկական գործոնները և նախագծել այնպես, որ նվազագույնի հասցվի հողի, մթնոլորտային օդի, ստորգետնյա կամ մակերևութային ջրերի

աղտոտումը, ապահովվի աղտոտված ջրի և թափոններից ծորացած կեղտաջրերի արդյունավետ հավաքումը, նվազեցվի ջրի կամ քամու հետևանքով առաջացող քայքայման ծավալը՝ որքան դա հնարավոր է տեխնիկապես և նպատակահարմար՝ տնտեսապես.

2) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտը կառուցել, կառավարել և պահպանել այնպես, որ ապահովվի դրա ֆիզիկական կայունությունը և կանխարգելվի հողի, բուսական, կենդանական աշխարհի, օդի, մակերևութային կամ ստորգետնյա ջրերի աղտոտումը, ինչպես նաև նվազագույնի հասցվի լանդշաֆտին հասցվող վնասը.

3) ունենալ համապատասխան պլաններ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների գործունեության դիտանցման և ներքին հսկողության, իսկ անկայունության վերաբերյալ արդյունքների կամ ջրի կամ հողի աղտոտման, բուսական, կենդանական աշխարհին հասցվող վնասի դեպքում՝ անհապաղ միջոցառումների իրականացման վերաբերյալ.

4) ունենալ օբյեկտի դասակարգման առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանից բխող տեխնիկական չափանիշներին համապատասխան կառավարման պլան.

5) ձեռնարկել համապատասխան միջոցառումներ հողատարածքի և բուսական, կենդանական աշխարհի վերականգնման և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակման ուղղությամբ.

6) ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակումից հետո անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար:

Հոդված 59.8. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակման և փակումից հետո կիրառվող ընթացակարգերը

1. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակման ընթացակարգը մեկնարկվում է, եթե՝

1) իրականացված են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի կառավարման պլանում նշված՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակմանը նախորդող բոլոր միջոցառումները.

2) ընդերքօգտագործողը ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակման մասին ծանուցել է ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին:

2. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ծանուցումն ստանալուց հետո տեղում «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցկացնում է ստուգումներ, գնահատում է տնտեսավարողի ներկայացրած բոլոր հաշվետվությունները, հաստատում է թափոնների օբյեկտի գործունեության արդյունքում վնասված հողատարածքի, բուսական, կենդանական աշխարհի վերականգնման փաստը և ընդունում է օբյեկտի փակման մասին որոշում:

Սույն կետում նշված որոշման մասին ընդերքօգտագործողը տեղեկացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Ընդերքօգտագործողը պատասխանատու է փակմանը հաջորդող փուլում ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի պահպանման, դիտանցման և հսկողության միջոցառումների իրականացման՝ օրենքով սահմանված պահանջների կատարման համար՝ հաշվի առնելով վնասի բնույթը և տևողությունը, բացառությամբ, երբ թափոնների օբյեկտի վերջնական փակումից հետո ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը օրենքով սահմանված կարգով որոշում է կայացրել՝ հանձն առնել այդ խնդիրները ընդերքօգտագործողի փոխարեն լուծելու պատասխանատվությունը:

4. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի վերջնական փակումից հետո ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողի փոխարեն սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված միջոցառումներն իրականացնելու դեպքերը և կարգը սահմանում է կառավարությունը:

5. Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի փակումից հետո օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջները բավարարելու համար ընդերքօգտագործողը պետք է վերահսկի ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի ֆիզիկական ու քիմիական կայունությունը և նվազեցնի ցանկացած բացասական ազդեցություն շրջակա միջավայրի, այդ թվում՝ մակերևութային և ստորգետնյա ջրերի վրա՝ ապահովելով, որ՝

1) ընդերքօգտագործման թափոնների օբյեկտին հարող բոլոր շինությունները դիտանցվեն ու պահպանվեն շահագործման համար միշտ պատրաստ հսկիչ և չափման սարքերի հետ.

2) անհրաժեշտության դեպքում հեղեղատարների հունները և ջրաթող օբյեկտները լինեն մաքուր և ազատ:

Հոդված 59.9. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից անցկացվող տեսչական ստուգումները

1. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողների մոտ թափոնների կառավարման և դրանց վերամշակմանն ուղղված աշխատանքների իրականացման նկատմամբ տեսչական ստուգումներն իրականացվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 59.10. Ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների գույքագրումը

1. Ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն իրականացնում է ընդերքօգտագործման թափոնների փակված (այդ թվում՝ լքված) օբյեկտների գույքագրումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օբյեկտների գույքագրման կարգը հաստատում է կառավարությունը:»:

Հոդված 26. Օրենսգրքի 60-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-10-րդ մասերով.

«7. Լիազոր մարմինը թույլտվության տրման մասին որոշման ընդունումից հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է դիմումատուին: Տեղեկացմամբ դիմումատուն պետք է նախագուշացվի սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված հետևանքների մասին:

8. Դիմումատուն սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված ծառայության մատուցման համար օրենքով սահմանված պետական տուրքը պարտավոր է վճարել ոչ ուշ, քան թույլտվության տրման դիմումը բավարարելու մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

9. Դիմումատուն լիազոր մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ կարող է չներկայացնել: Դիմումատուի կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացվելու դեպքում լիազոր մարմինը թույլտվության տրման դիմումը բավարարելու մասին որոշումն ընդունելուց հետո գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ սույն հոդվածի 8-րդ մասում նշված ժամկետում վճարված լինելու մասին և դիմումատուին պատշաճ ձևով հանձնում կամ ուղարկում է թույլտվությունը, ինչպես նաև՝ դրա վերաբերյալ համապատասխան որոշումը:

10. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում թույլտվության տրամադրման որոշման մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո, իսկ հայտատուի կողմից պետական տուրքը թույլտվության տրամադրման որոշման մասին պատշաճ ձևով տեղեկացումից հետո վճարման դեպքում՝ հայտատուի կողմից պետական տուրքը վճարվելու օրվանից: Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետում դիմումատուի կողմից պետական տուրքը չվճարվելու դեպքում լիազոր մարմնի կայացրած համապատասխան որոշումը չեղյալ է ճանաչվում:»:

Հոդված 27. Օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասը «պահպանության» բառից հետո լրացնել «, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման» բառերով:

Հոդված 28. Օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և

անցկացման մասին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» բառերով:

Հոդված 29. Օրենսգրքի 79-րդ հոդվածում՝

- 1) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.
- 2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մաս.

«8. Օրենսգրքի 5.1-ին գլուխն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 ամսվա ընթացքում, ընդերքօգտագործողները պարտավոր են իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին՝ միաժամանակ սահմանված կարգով ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները և ֆինանսական երաշխիքները:»:

Հոդված 30. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տեխնաձին հանքավայրերը հանդիսանում են ընդերքօգտագործման թափոնների վերամշակման օբյեկտներ, և դրանք շահագործող ընդերքօգտագործողները պարտավոր են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 ամսվա ընթացքում, իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին՝ միաժամանակ սահմանված կարգով ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելով ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները և ֆինանսական երաշխիքները:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. ապրիլի 5
Ստեփանակերտ
ՀՕ-1-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
մարտի 29-ին

«ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2005 թվականի ապրիլի 27-ի ՀՕ-198 օրենքի 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Սույն օրենքի գործողությունը ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների մշակման հետ կապված հարաբերությունների նկատմամբ տարածվում է այնքանով, որքանով չի հակասում Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված կարգավորումներին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

2018թ. ապրիլի 5
Ստեփանակերտ
ՀՕ-2-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2018 թվականի
մարտի 29-ին

**«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն կարգը կիրառվում է սույն կետում նշված ապրանքատեսակների նկատմամբ, եթե տվյալ ապրանքատեսակը պայմանագրի առարկա է և դրա մատակարարման պայմանագրով նախատեսված գնատեսակի մեծությունների մասին տվյալներ են հրապարակվում օտարերկրյա բորսայի, հանդեսի կամ կայքի կողմից:

3. Սույն կարգի իմաստով՝

1) մատակարարված հանքաքարի, մետաղի (մետաղի օքսիդի) խտանյութի, ձուլվածքի (այսուհետ՝ ապրանք) վերջնական քանակ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ ապրանքի մատակարարման պայմանագրին (այսուհետ՝ պայմանագիր) համապատասխան կատարվող վերջնահաշվարկի (այսուհետ՝ վերջնահաշվարկ) արդյունքով որոշված՝ ապրանքի վերջնական կշիռը:

2) ապրանքի որակական հատկանիշ է համարվում մատակարարված ապրանքում տվյալ մետաղի կամ մետաղի օքսիդի (այսուհետ՝ մետաղի) պարունակությունը՝ արտահայտված տոկոսով կամ 1 տոննայում (հանքաքարի կամ խտանյութի դեպքում՝ վերահաշվարկված չոր կշռով) դրա կշռով:

4. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելու նպատակով մատակարարված ապրանքում որպես տվյալ մետաղի կշռի միավորի բազային գին ընդունվում է Մետաղների լոնդոնյան բորսայում (Լոնդոն Մեթալ էքսչենջ «London Metal Exchange» (LME), կայքի հասցեն՝ <http://www.lme.co.uk/>), Նյու Յորքի առևտրային բորսայում (Նյու Յորք Մերքենթայլ էքսչենջ «New York Mercantile Exchange» (Nymex), կայքի հասցեն՝ <http://www.nymex.com/>) կամ Տոկիոյի ապրանքային բորսայում (Տոկիո Բըրոնդի էքսչենջ «Tokyo Commodity Exchange» (Tocom), կայքի հասցեն՝ <http://www.tocom.or.jp/>) արձանագրված՝ սույն կարգի 5-րդ կետին համապատասխան որոշվող գինը: Բացի նշված կայքերում արտացոլվող տվյալներից՝ որպես նշված բորսաների պաշտոնական գների աղբյուր կարող են ծառայել «Լոնդոն Մեթալ Բյուլետին» («London Metal Bulletin») և «Փլեթս Մեթալս Վիկ» («Platts Metals Week») (կայքի հասցեն՝ <http://www.platts.com/Metals/>) հանդեսներում հրապարակված գները: Բազային գնի որոշման նպատակով հիմք է ընդունվում նշված բորսաներից այն բորսայի գինը, որը նշված է ապրանքի պայմանագրում, իսկ պայմանագրով այլ բորսայի գնի կիրառում նախատեսված լինելու դեպքում՝

1) ապրանքը եվրոպական (այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնություն) և աֆրիկյան երկրներ մատակարարվելու դեպքում՝ Մետաղների լոնդոնյան բորսայի գինը:

2) ապրանքը ասիական երկրներ և Ավստրալիա մատակարարվելու դեպքում՝ Տոկիոյի ապրանքային բորսայի գինը:

3) Հյուսիսային կամ Հարավային Ամերիկայի երկրներ մատակարարվելու դեպքում՝ Նյու Յորքի բորսայի գինը:

5. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելու համար մատակարարված ապրանքում, որպես տվյալ մետաղի կշռի միավորի բազային գին, հիմք է ընդունվում համապատասխան բորսայում արձանագրված այն գնատեսակը, որը նախատեսված է պայմանագրով: Ընդ որում՝ որպես այդպիսի գին ընդունվում է այն գինը, որը սույն կարգի 4-րդ կետում նշված համապատասխան աղբյուրի կողմից հրապարակվել է որպես տվյալ բորսայում բորսայական շաբաթվա ընթացքում արձանագրված միջին գին: Նշված գինը կիրառվում է հրապարակման օրվան հաջորդող օրվանից՝ մինչև համապատասխան աղբյուրի կողմից նոր գների հրապարակման օրը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում իրականացրած մատակարարումների նկատմամբ:

6. Եթե կնքված պայմանագրի համաձայն ապրանքում առկա մետաղի գինը որոշվում է կիրառելով պայմանագրով արձանագրված գինը, ապա ԱԱՀ-ով հարկվող շրջանառության կամ եկամտի որոշման նպատակով որպես մետաղի բազային գին ընդունվում է պայմանագրով սահմանված գինը: Այն դեպքերում, երբ ապրանքում առկա մետաղի գինը, ըստ պայմանագրի, որոշվում է պայմանագրով սահմանվող ժամանակաշրջանի համար որոշված գինը պայմանագրով նախատեսված կարգով վերահաշվարկելու միջոցով, ԱԱՀ-ով հարկվող շրջանառության կամ եկամտի որոշման

նպատակով որպես պայմանագրով սահմանվող ժամանակաշրջանի գին ընդունվում է սույն կարգի 5-րդ և 8-րդ կետերին համապատասխան որոշված գինը:

7. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշվում է ապրանքում առկա յուրաքանչյուր մետաղի համար առանձին, եթե ապրանքում առանձին մետաղի առկայության համար պայմանագրով նախատեսված է առանձին վճարում: Ապրանքի մատակարարման պահին որոշված՝ որևէ մետաղի որակական հատկանիշից վերջնահաշվարկով համապատասխան ցուցանիշի սույն կարգի 12-րդ կետին համապատասխան որոշվող շեղում արձանագրվելու դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը վերահաշվարկվում է միայն տվյալ մետաղի մասով:

8. Ապրանքի մատակարարման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելու նպատակով՝

1) մատակարարվող ապրանքում տվյալ մետաղի ֆիզիկական ծավալը (կշիռը) ճշգրտվում է դրա գտման հետ կապված՝ պայմանագրով նախատեսված նվազեցման (տեխնոլոգիական կորստի) չափով:

2) որոշվում են մատակարարված ապրանքում մետաղների կշռի միավորի հաշվարկային գները: Այդ հաշվարկային գները հաշվարկվում են սույն կարգի 5-րդ կետում նշված բազային գներից պայմանագրով նախատեսված նվազեցումներ (այդ թվում՝ տոկոսով կամ բացարձակ մեծություններով արտահայտված գեղչեր, մշակման և (կամ) վերամշակման համար վճարներ) կատարելով: Մատակարարված ապրանքի հիմնական (առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող) բաղադրիչի գինը պայմանագրով սահմանված չափով նվազեցվում է նաև մատակարարված ապրանքում առկա՝ դրա վերամշակման ընթացքում տեխնոլոգիական բարդություններ առաջացնող քիմիական տարրերի (այսուհետ՝ տուգանային տարրեր) համար՝ ելնելով դրանց մատակարարման պահին հայտնի քանակություններից: Հանքաքարի կամ մետաղի խտանյութի խոնավության առավելագույն չափի գերազանցման համար մատակարարված ապրանքի գների պայմանագրով նախատեսված ճշգրտումներ չեն կատարվում:

9. ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելու նպատակով ապրանքի մատակարարման պահին որոշված քանակին և որակական հատկանիշներին վերաբերվող տվյալները վերջնական են, բացառությամբ սույն կարգի 10-րդ և 11-րդ կետում նշված չափերի գերազանցման դեպքերի, և վերջնահաշվարկի արդյունքներին համապատասխան ենթակա չեն փոփոխման: ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը ենթակա չէ փոփոխման նաև ապրանքի մատակարարման պահին արձանագրված չափից ավելի խոնավություն կամ տուգանային տարրեր արձանագրված լինելու պատճառով վերջնահաշվարկի արդյունքով մատակարարին վճարման ենթակա գումարը նվազելու դեպքերում:

10. Վերջնահաշվարկի արդյունքներով որոշված քանակից մատակարարման պահին որոշված քանակի շեղման (վերջնահաշվարկի արդյունք՝ հանած մատակարարման պահին որոշված քանակ) առավելագույն չափ է համարվում մատակարարման պահին որոշված քանակի (կշռի) 2 տոկոսը:

11. Մատակարարված ապրանքի վերջնահաշվարկի արդյունքներով որոշված որակական հատկանիշից, ինչպես նաև տուգանային տարրի չափից ապրանքի մատակարարման պահին որոշված համապատասխան մեծության շեղման (վերջնահաշվարկի արդյունք՝ հանած մատակարարման պահին որոշված մեծություն) առավելագույն չափերն են:

Ապրանքատեսակի անվանումը	Ապրանքի 1 տոննայում մատակարարման պահին որոշված որակական հատկանիշից վերջնահաշվարկով համապատասխան հատկանիշի շեղման առավելագույն չափը, արտահայտված՝	
	տոկոսային կետով	կշռով
երկաթ	4	X
պղինձ	4	X
ցինկ	4	X
կապար	4	X
քրոմ	4	X
վոլֆրամ	4	X
մոլիբդեն	4	X
տանտալ, նիոբիում, վանադիում կամ ցիրկոնիում	4	X
մետաղի օքսիդ	4	X
ոսկի	X	4 գրամ
արծաթ	X	30 գրամ
մատակարարման պայմանագրով նախատեսված տուգանային տարրեր	ապրանքի մեջ տուգանային տարրերի առկայության պայմանագրով նախատեսված առավելագույն չափեր	

12. Սույն կարգի կիրառման առումով համարվում է, որ տեղի է ունեցել վերջնահաշվարկի արդյունքներով որոշված քանակից և (կամ) որակական հատկանիշներից ապրանքի մատակարարման պահին որոշված համապատասխան ցուցանիշի առավելագույն չափը գերազանցող չափով շեղում, եթե բացարձակ թվով այն գերազանցում է սույն կարգի 11-րդ կետում նշված առավելագույն չափը:

13. Սույն կարգի 12-րդ կետին համապատասխան շեղում արձանագրվելու դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշվում է՝ հիմք ընդունելով սույն կարգի 8-րդ կետին համապատասխան որոշված գինը, ապրանքի վերջնահաշվարկի արդյունքում որոշված քանակն ու որակական հատկանիշները:

14. Սույն կարգին համապատասխան ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելիս, բացառությամբ՝ սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքի՝ հիմք են հանդիսանում.

1) ապրանքի մատակարարման պահին դուրս գրված և գնորդին տրամադրված հաշվարկային փաստաթղթում (Արցախի Հանրապետության տարածքում ապրանքի մատակարարման գործարք իրականացնելու դեպքում՝ հարկային հաշվում) արտացոլված քանակական և որակական հատկանիշները՝ հաշվի առած որակական հատկանիշների սույն կարգի 8-րդ կետին համապատասխան կատարվող նվազեցումները.

2) սույն կարգի 8-րդ կետին համապատասխան որոշված՝ ապրանքի միավորում առկա մետաղների հաշվարկային գները:

15. Սույն կարգի 13-րդ կետին համապատասխան ԱԱՀ-ով հարկվող շրջանառության կամ եկամտի որոշման համար հիմք են ընդունվում վերջնահաշվարկի փաստաթղթում (գնորդի և մատակարարի կողմից հաստատված ակտ կամ այլ փաստաթուղթ) արտացոլված քանակն ու որակական հատկանիշները՝ հաշվի առած սույն կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետում նշված նվազեցումները և սույն կարգի 8-րդ կետին համապատասխան որոշված գինը:

16. Սույն կարգին համապատասխան կատարվող հաշվարկները և վերահաշվարկները կատարվում են միայն ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը կամ եկամուտը որոշելու համար: Բացի ԱԱՀ-ով հարկվող շրջանառության կամ եկամտի որոշման համար սույն կարգին համապատասխան հիմք ընդունող ցուցանիշներից,

պայմանագրով նախատեսված կարգով մատակարարների կողմից դուրս գրված այլ հաշվարկային փաստաթղթերում արտացոլված տվյալները հիմք չեն համարվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության կամ եկամտի հաշվարկման կամ վերահաշվարկման համար:

17. Սույն կարգի 13-րդ կետին համապատասխան որոշվող ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա գումարի (առանց ԱԱՀ-ի) ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց հատուցման ենթակա վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում՝ որպես ԱԱՀ-ով հարկվող շրջանառության ավելացում կամ պակասեցում:

18. Սույն կարգի 13-րդ կետին համապատասխան որոշվող ապրանքի մատակարարման դիմաց եկամտի ավելացումը կամ պակասեցումը ներառվում է ապրանքի մատակարարման դիմաց եկամտի վերջնական գումարը հայտնի դառնալու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացվող շահութահարկի հաշվարկում՝ որպես եկամտի ավելացում կամ պակասեցում:

19. Խտանյութում տվյալ մետաղի կամ մետաղի օքսիդի պարունակությունը որոշելու նպատակով հարկային մարմնի պահանջով հարկ վճարողը պարտավոր է ընտրանքային կարգով վերցված նմուշի քիմիական տարրալուծումներ կատարել հարկային մարմնի կողմից նախանշված անկախ մասնագիտացված կազմակերպությունում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2018թ.

N 248-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 400 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի «Հարկային մարմնի կողմից հարկ վճարողների վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» N 400 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում և որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-ին կետում «30-րդ» բառը փոխարինել «30.1-ին» բառով.

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով,

բ. 2-րդ կետի «դ» ենթակետից հանել «, ինչպես նաև 1.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի և նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ տվյալները (N 6 ձև)» բառերը,

գ. 2-րդ կետի «ե» ենթակետում «3.0 մլն դրամ» բառերը փոխարինել «10.0 մլն դրամ» բառերով,

դ. 2-րդ կետի «զ» ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

ե. 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը» ենթակետ.

«ը) հաշվետու տարվա ընթացքում աշխատողի՝ աշխատանքի ընդունումն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած և (կամ) գրանցման հայտ չներկայացրած հարկ վճարողների (առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի) վերաբերյալ տվյալները (N 9.1 ձև)»;

գ. 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայության» բառերը փոխարինել «հարկային մարմնի» բառերով,

ե. 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայությունը» բառերը՝ «հարկային մարմինը» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝

ա. NN 5 և 7 ձևերում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. NN 6 և 8 ձևերն ուժը կորցրած ճանաչել,

գ. N 7 ձևում «3.0 ՄԼՆ ԴԲԱՄ» բառերը փոխարինել «10.0 ՄԼՆ ԴԲԱՄ» բառերով,

դ. N 9 ձևից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ N 9.1 ձև.

«Ձև N 9.1

Ց Ա Ն Կ

**20__ ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂԻ՝
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ
ՄԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԳՐԱՆՑԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ
ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ)**

Հ/Հ	ՀՎՀՀ-ն	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը
1	2	3	4

»,

ե. N 10 ձևում «ԼՂՀ» հապավումը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2018թ.

N 249-Ն

ք.Ստեփանակերտ

ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ «2012» ԹՎԱԳՐՄԱՄԲ ԱԿՑԻԶԱՅԻՆ
ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ
ԴՐՈՇՄԱՆԻՇՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱՅՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ակցիզային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Արցախի
Հանրապետության կառավարությունը **ա ղ ա ղ ու մ է.**

1. 2018 թվականի մայիսի 2-ից կիրառությունից հանել (չտրամադրել)
Արցախի Հանրապետությունում արտադրվող՝ ակցիզային հարկով հարկման
ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման համար «2012» թվագրմամբ
ակցիզային դրոշմանիշները:

2. Սահմանել, որ 2018 թվականի հուլիսի 2-ից Արցախի Հանրապե-
տությունում արգելվում է Արցախի Հանրապետությունում արտադրված՝
«2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանք-
ների իրացումը:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ մինչև 2018
թվականի մայիսի 15-ը հաստատել Արցախի Հանրապետությունում արտա-
դրվող ապրանքների դրոշմավորման համար նախատեսված՝ չօգտագործված
և (կամ) վնասված «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշների դուրս-
գրման ու ոչնչացման կարգը և ապահովել այդ աշխատանքների կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2018թ.

N 250-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N 335-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական հսկողության բարձրագույն մարմին սահմանելու մասին» N 335-Ն որոշման 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական նախարարը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2018թ.

N 251-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 235-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի «Որդեգրման կարգը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի N 60 և 2007 թվականի մայիսի 15-ի N 217 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 235-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման՝

ա. վերնագրում «ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» բառից հետո լրացնել «, ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» բառերը,

բ. նախաբանում «150-րդ հոդվածի 3-րդ մասի» բառերը փոխարինել «149-րդ հոդվածի 5-րդ մասի» բառերով,

գ. 1-ին կետի 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ կետեր

«1.1. Ստեղծել որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողով:

1.2. Հաստատել՝

1) որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի.

2) որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 4 հավելվածի:».

2) որոշմամբ հաստատված N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետում «ստեղծություններ» բառից հետո լրացնել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված որդեգրման համար տրված ծնողի (ծնողների) համաձայնությունը» բառերը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Որպես որդեգրման ենթակա հաշվառվում են նաև այն երեխաները, որոնց որդեգրման համար առկա է ծնողների համաձայնությունը, երբ երեխային

որդեգրելու ցանկություն են հայտնել երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները կամ որդեգրել ցանկացող այլ անձ:»:

բ. 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերով,

գ. 19-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն» բառերով,

դ. 38-րդ կետում «կենտրոնական մարմինն առանց ժամկետի սահմանափակման կարող է հարցմամբ պահանջել և ստանալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը:» բառերը փոխարինել «որդեգրման նպատակով երեխայի կենտրոնացված հաշվառումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում տվյալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը:» բառերով,

ե. 46-րդ կետը լրացնել հետևյալ պարբերությամբ.

«Դիմումի հետ ներկայացվում է հայտարարություն՝ համաձայն N 3.1 ձևի, սույն կարգի 7-րդ կետի 2-4-րդ, 6-րդ և 9-րդ ենթակետերով ներկայացված տեղեկություններում փոփոխությունների առկայության կամ բացակայության, ինչպես նաև ընտանեկան կարգավիճակի փոփոխման վերաբերյալ:»,

զ. 47-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«47. Նախարարությունը համապատասխան ուսումնասիրություն (որդեգրման մասին այլ դիմումների առկայություն և այլն) կատարելուց հետո կասեցնում է որդեգրման ենթակա երեխայի տվյալների տրամադրումը որդեգրել ցանկացող այլ անձանց կամ մարմինների: Նախարարությունը գիշերօթիկ հաստատության միջոցով ապահովում է որդեգրման ենթակա երեխայի և որդեգրել ցանկացող անձի հանդիպումը: Որդեգրման ենթակա երեխայի կարգավիճակը փոխված լինելու դեպքում նախարարությունն անմիջապես տեղեկացնում է կենտրոնական մարմնին: Նախարարության կողմից ստացված տեղեկատվության հիման վրա կենտրոնական մարմինը որդեգրման գործընթացը դադարեցնելու դեպքում տեղեկացնում է նախարարությանը: Նախարարությունն ստացված տեղեկատվության հիման վրա հաշվառման մատյանում կամ էլեկտրոնային տեղեկատվական համակարգում կատարում է համապատասխան գրառում:»,

է. 48-րդ կետը «հերթականությամբ» բառից հետո լրացնել «, որի մասին նախարարության կողմից անմիջապես տեղեկացվում է կենտրոնական մարմնին» բառերով,

ը. 49-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչություն» բառերով,

թ. 50-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչություն» բառերի համապատասխան հոլովաձևերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ոստիկանություն» բառերով,

ժ. 51-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչությունը»

բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության» բառերը՝ «Արցախի Հանրապետության կառավարության» բառերով,

ժա. 53-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության» բառերը փոխարինել «Կենտրոնական մարմնի» բառերով,

ժբ. 55-րդ կետը «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ նոր եզրակացություն ստանալու համար ներկայացվում են միայն սույն կարգի 7-րդ կետի 4-րդ, 6-րդ, 9-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերը, եթե նախկինում ներկայացված մյուս փաստաթղթերը վավեր են և տեղեկությունները չեն փոփոխվել» բառերով,

ժգ. 56-րդ կետում «օրինակը» բառից հետո լրացնել «, իսկ եզրակացության կորստի, օգտագործման ոչ պիտանի լինելու և այլ դեպքերում նրա դիմումի հիման վրա տրամադրվում է եզրակացության կրկնօրինակը» բառերով,

ժդ. 58-րդ կետը «ենթակետերով» բառից հետո լրացնել «, 8-րդ կետով» բառերով,

ժե. 59-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 60-րդ կետ՝
«60. Կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին»,

ժզ. NN 2, 5, 6, 7 Ձևերում «ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարությունում» բառերը փոխարինել «ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունում» բառերով,

ժէ. լրացնել Ձև N 3.1՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշմամբ հաստատված N 2 հավելվածում՝

ա. 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն» բառերը բոլոր հոլովածներով փոխարինել «Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն» բառերի համապատասխան հոլովածներով,

բ. 4-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերով,

գ. 9-րդ կետում «150-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերը փոխարինել «149-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով» բառերով.

4) որոշումը լրացնել N 3 և N 4 հավելվածներով՝ համաձայն N 2 և N 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

«Ձև N 3.1

_____ (նշել այն մարմնի անվանումը)

_____ ում ներկայացվում է հայտարարությունը)

Դիմող _____

_____ (անունը, հայրանունը, ազգանունը)

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԻ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի N 235-Ն որոշմամբ հաստատված որդեգրման կարգի 46-րդ կետի համաձայն հայտնում եմ իմ վերաբերյալ ներկայացված տեղեկություններում փոփոխությունների մասին.

Բնակարանային պայմանները _____

Ընտանիքի կազմը _____

Ընտանեկան կարգավիճակը _____

(ամուսնացած, ամուրի և այլն)

Զբաղեցրած պաշտոնը, աշխատավարձը և այլ եկամուտները _____

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 5-ի N 218 որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդությունները _____

Դատվածությունը _____

Լրացուցիչ տեղեկություններ _____

Դիմող _____

(անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

_____ թ. »:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) քննարկում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ նաև՝ օտարերկրյա քաղաքացի) կողմից Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա (այսուհետ՝ երեխա) որդեգրելու հետ կապված հարցերը:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Արցախի Հանրապետության օրենքներով, Արցախի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ և իր կողմից հաստատված աշխատակարգով:
3. Հանձնաժողովն իր գործունեությամբ հաշվետու և պատասխանատու է Արցախի Հանրապետության կառավարությանը:
4. Հանձնաժողովն ունի իր անվամբ կլոր կնիք, ձևաթուղթ և դրոշմակնիք:
5. Հանձնաժողովում որդեգրման հետ կապված տեղեկությունները գաղտնի են:

II. Հանձնաժողովի խնդիրները և իրավասությունները

6. Հանձնաժողովի խնդիրներն են՝
 - 1) օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխա որդեգրելու հետ կապված հարցերի քննարկումը.
 - 2) օտարերկրյա քաղաքացիների կողմից երեխայի որդեգրման հնարավորության մասին եզրակացություն տալը.
 - 3) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացիների հաշվառումը.
 - 4) սույն կանոնադրությունից բխող և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրների իրականացումը:
7. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս պարտավոր է՝
 - 1) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում, իրավասու մարմիններին կատարած հարցման միջոցով, անցկացնել այդ անձի ու նրա կենսապայմանների ուսումնասիրություն և կազմել համապատասխան ակտ.
 - 2) որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց ստացված փաստաթղթերի և կազմված ակտի հիման վրա սահմանված կարգով լրացնել որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացու անձնական քարտը, տալ որդեգրման հնարավորության մասին գրավոր եզրակացություն և դրական եզրակացության դեպքում նրան վերցնել հաշվառման՝ որպես որդեգրողի թեկնածու.
 - 3) որդեգրման հնարավորության մասին բացասական եզրակացություն կայացնելու դեպքում, մեկշաբաթյա ժամկետում դրա մասին գրավոր տեղեկացնել դիմողին.
 - 4) որդեգրողի թեկնածու օտարերկրյա քաղաքացու փաստաթղթերի, կենսապայմանների ուսումնասիրության ակտի ու անձնական քարտի հիման վրա կազմել համապատասխան տեղեկանք, հաշվառման պահից եռօրյա ժամկետում այն

փոխանցել Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը.

5) որդեգրողի թեկնածու օտարերկրյա քաղաքացու պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ որդեգրման ենթակա երեխայի և նրա մերձավոր ազգականների մասին.

6) կազմակերպել որդեգրման ենթակա երեխայի և որդեգրողի թեկնածու օտարերկրյա քաղաքացու հանդիպումը.

7) սահմանված կարգով իր կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային ընտրելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությանը.

8) կատարել սույն կանոնադրությունից բխող և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

8. Հանձնաժողովն իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս իրավունք ունի՝

1) Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունից պարբերաբար ստանալու տեղեկատվություն որդեգրման ենթակա երեխաների մասին.

2) տասնօրյա ժամկետում, ըստ անհրաժեշտության, որդեգրել ցանկացող օտարերկրյա քաղաքացուց պահանջելու նրա մերձավոր ազգականների համաձայնությունը, ինչպես նաև տվյալ պետությունում Արցախի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության, հայ համայնքի, հայկական եկեղեցու, վստահություն վայելող անձանց (կազմակերպությունների) երաշխավորագրերը.

3) վարչակազմի ղեկավարից ստանալու որդեգրման վերաբերյալ որոշման պատճենը.

4) իրականացնելու սույն կանոնադրությունից բխող և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

III. Հանձնաժողովի կազմը, աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը

9. Հանձնաժողովը կազմված է նախագահից, քարտուղարից և անդամներից:

10. Հանձնաժողովի կազմի մեջ, ի պաշտոնե, մտնում են Արցախի Հանրապետության արդարադատության նախարարը (հանձնաժողովի նախագահ), Արցախի Հանրապետության առողջապահության նախարարը, Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարը, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալը, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետը, Արցախի Հանրապետության ռստիկանության պետի տեղակալը, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի տեղակալը, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության պետը (հանձնաժողովի քարտուղար):

11. Հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական կարգով:

12. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի և սույն կանոնադրությամբ նախատեսված գործողությունների միջոցով:

13. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամսական մեկ անգամ:

14. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

15. Հանձնաժողովի նիստերը, նախագահի հանձնարարությամբ, կարող է վարել հանձնաժողովի անդամներից մեկը:

16. Հանձնաժողովի անդամները նիստերի հրավիրման օրվա, տեղի, ժամանակի և օրակարգի մասին իրազեկվում են նիստի հրավիրման օրվանից առնվազն հինգ օր առաջ:

17. Հանձնաժողովի նախագահի հրավերով հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել այլ անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

18. Հանձնաժողովի որոշումները և որդեգրման հնարավորության մասին եզրակացությունները (այսուհետ՝ որոշում) ընդունվում են բաց քվեարկությամբ նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

19. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը:

2) հրավիրում է հանձնաժողովի նիստեր և վարում դրանք:

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունները:

4) վերահսկողություն է իրականացնում հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման նկատմամբ:

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում:

6) հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում:

7) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում հանձնաժողովի նախագահին ու անդամներին:

2) վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները:

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները:

4) կատարում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները:

21. Հանձնաժողովի անդամները՝

1) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին:

2) հարցեր են ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը:

3) առաջարկություններ են ներկայացնում հանձնաժողովի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

4) ծանոթանում են հանձնաժողովի նիստերի արձանագրություններին:

5) կատարում են հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները:

22. Հանձնաժողովի գործունեության տեղեկատվական-վերլուծական, կազմակերպական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալությունը:

23. Հանձնաժողովի անդամների հետ կապված ծախսերը կատարվում են Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պահպանման ծախսերի հաշվին:

24. Հանձնաժողովի լուծարումից հետո նրա գործունեության հետ կապված նյութերը, փաստաթղթերը ենթակա են պահպանման Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱՋԱՐՅԱՆ

Հավելված N 3
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի ապրիլի 11-ի N 251-Ն որոշման

«Հավելված N 4
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության
2011 թվականի ապրիլի 26-ի N 235-Ն որոշման

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Արարատ Դանիելյան	- Արցախի Հանրապետության արդարադատության նախարար (հանձնաժողովի նախագահ)
Կարինե Աթայան	- Արցախի Հանրապետության առողջապահության նախարար
Սամվել Ավանեսյան	- Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար
Նարինե Աղաբալյան	- Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարար
Ֆելիքս Խաչատրյան	- Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ
Նորայր Մկրտչյան	- Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ
Գագիկ Ղահրամանյան	- Արցախի Հանրապետության ռստիկանության պետի տեղակալ
Ալբերտ Խաչիյան	- Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ
Լիանա Միրզոյան	- Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության պետ (հանձնաժողովի քարտուղար):»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2018թ.

N 256-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 713 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների և մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քուրքների ծախսի, ավտոդողերի վազքի և կուտակչային մարտկոցների ծառայության ժամկետների նորմաները սահմանելու մասին» N 713 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, որոշման նախաբանում «պետական մարմինների» բառերից առաջ, որոշման 1-ին և 2-րդ կետերում, որոշմամբ սահմանված թիվ 1 և թիվ 3 հավելվածներում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի N 1 աղյուսակում.

ա. «Немак 32322-020» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	ЛА3-699 P	50.4	»
---	-----------	------	---

բ. «YA3- 452, -452A, -452B» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	YA3 Hunter 2.7	17.9	»
---	----------------	------	---

գ. «ПА3-32054 («ՌԶԱԱ»-ի կամրջակներով)» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	ПА3-672	33.4	»
---	---------	------	---

դ. «Chevrolet Lacetti» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«	Chevrolet – Niva 212300-55L	13.7	»
	CHEVROLET SHEVY-VAN	20.1 դիզելային վառելիք	

ե. «Nissan Maxima» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	Nissan X-Trail 2.0	12.0	»
---	--------------------	------	---

զ. «Toyota Corolla 1.6» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողեր.

«	TOYOTA FORTUNER 2.7 GAS	15.9	»
	TOYOTA IPSUM 2.4	12.0	

է. «Toyota Landcruiser» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տող.

«	Toyota Land Cruiser 150 4.0 Gas	18.7	».
---	---------------------------------	------	----

3) որոշմամբ սահմանված թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի ապրիլի 12-ի N 256-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության
«28» հոկտեմբերի 2008թ. թիվ 713 որոշման

Ն Ո Ր Մ Ա Ն Ե Ր
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ԱՎՏՈՂՈՂԵՐԻ ՎԱՋՔԻ

Հ/Հ Ը/Կ	Ավտոմեքենայի բազային մոդելը	Ավտոդողի նշանակումը (տեսակա- չափը)	Ավտոդողի մոդելը	Ավտոդողի վազքի նորման (հազար կիլոմետր)
1	2	3	4	5
1	BA3-1111 «Ока» և մոդիֆիկացի- աները	135/80R12	БИ-308	25
2	BA3-2101, -2102, -2103, -2104, -2105, -2106, -2107, -2108, -2109 և մոդի- ֆիկացիաները	155-13/6,15-13	И-151	28
		165-13/6,45-13	АИ-168У, М-145, С-110, Вл-20, VS-2	28
		165/70R13	Бл-85, ВС-11, ВС-2, Бц-19, Я-508, КАМА-205,КАМА-503, МР-8	32
		165/80R13	МИ-16-1, МИ-16, Я-370, Я-515	32
		175/70R13	Бл-85, ВС-4, ВС-11, ВС-20, 10В, VS-12, М-202, М-204, Я-380, Я-458, Я-545, Я-552, И-391, БИ-391, ВЛИ-391	32
			М-232, О-78, Я-400, 15В, SPT4	28
185/65R13	БЦ-13, БЦ-16, К-161, К-177	32		
3	BA3-2121 «Нива» և մոդի- ֆիկացիաները	175-16/6,95-16	Вл-21, ВЛИ-5	32
		175/80R16	Я-457	32
			ВЛИ-10	28
		185/75R16	К-156	32
			VS-17,Вл-53	28
		205/70R16		32
4	BA3-2123 և մո- դիֆիկացիաները	205/70R15		32
5	ГA3-24 և մոդի- ֆիկացիաները	7.35-14	ИД-195, АИД-23, ВЛ-14, ВЛ-20	28
6	ГA3-3102, -31013, -31029, -3105, -33029, -24 և մոդիֆի- կացիաները	205/70R14	ИД-220, ОИ-297, ИЛ-259, VS-1, КАМА-ART, КС-2, БЦИД-220, БЦ-1, И-371, И-503, НР-60, ЛМ-2, Бел-59, Я-426, Я-440, Я-436	35
			М-227, М-217	32
7	ГA3-3110 և մոդի- ֆիկացիաները	195/65R15	Л-8, КАМА Nicola, КАМА Grant, Я-437, Я-456, И-501	35
8	ГA3-221400, -3302, -3221, -2705, -3232	175R16C	К-135, Я-462, И-512, ВЛИ-10М, Бр-102, ВИ-14	42
		175/80R16C	Я-447, ДП-10	

	«Газель» և մոդիֆիկացիաները	185/75R16C			
9	ГАЗ-14 «Чайка»	9.35-15	ИЛ-126, ИЛ-137	17	
10	ГАЗ-52 և մոդիֆիկացիաները	7,50R20	В-196, ИЯ-196	63	
		7,50-20	ИЯ-112А	56	
			МИ-173, МИ-173-1,	56	
			Я-151	53	
11	ГАЗ-53 և մոդիֆիկացիաները	7,50-20	М-149А	52	
		8,25-20	ИК-6АМ, ИК-6-АМ-1, ИК-6АМО	53	
		8,25R20	К-55А, КИ-55А	49	
			КИ-63	56	
			К-84	60	
			У-2	53	
		220-508	М-149А	49	
240-508	М-149А	52			
12	ГАЗ-66 և մոդիֆիկացիաները	12,00R18	К-70	35	
		12,00-18	КИ-115/115А	46	
		320x457	К-70	35	
13	ЗАЗ-968, -1102 և մոդիֆիկացիաները	155/70R13	БЦ-11, БЛ-85, БЛ-85-1	32	
		6.15-13	И-151	28	
14	ЗИЛ-130 և մոդիֆիկացիաները	9,00R20	И-Н-142БМ, 0-40БМ, И-Н142Б-1	50	
15	ЗИЛ-131, -131 АЛГ և մոդիֆիկացիաները	12,00-20	КИ-113	50	
16	ИЖ-2125, -2126, -2715, Москвич -408, -412, -423, -424, -427, -2136, -2140 և մոդիֆիկացիաները	6.45-13	М-145, Вл-20, БЦС-1, С-110	28	
		165/70R13	Я-370	28	
		165/80R13	МИ-16, М-190, Я-370	32	
			Вл-14, АИ-168У	28	
		175/70R13	ИН-251, 10В, ВЛИ-391, И-391, БИ-391, Я-402	32	
Я-400, С-129, SPT-4	28				
17	КамАЗ տարբեր մոդիֆիկացիաների	10,00R20	ОИ-73Б	50	
		11,00R20		50	
		395/80R20		50	
18	Москвич -2141 և մոդիֆիկացիաները	165/80R14	МИ-180	32	
		185/65R14	БЦ-5, И-394, БИ-394, М-239, 26В, К-187, Я-438, Я-460, Я-523, Я-540, VS-18	35	
19	Неман տարբեր մոդիֆիկացիաների	280/70R572 (11/70R22,5)		49	
		275/70R22,5	Бел-108		
		235/75R17,5			
20	ПАЗ-3205, -3206 և մոդիֆիկացիաները	7.50-20	ИЯ-112А	56	
		8.25-20	ИК-6АМ, ИК-6АМ-1, ИК6АМО		
		8.25 R 20	К-55А, КИ-55А		
			КИ-63		
			К-84		67
			Вл-25, И-397		56
			КИ-111		70
О-2	49				
21	УАЗ-2206, -22069, -3741, -37419, -3962,	215/90-15С		46	
		215/90R15С			
		225R16С	К-151		

	-39629, -3909, -39099, -3303, -33039, -2746, -33036, -39094, -39095, -3151, -3153, -31539, -3159, -3163, -3164 և մոդիֆի- կացիաները	225/75R16	К-153, Я-435А	35
		225/75R16		
		235/70R16		
		245/70R16		
		215/90R15	Я-245-1, ЯИ-357А	
		8,40-15	Я-245, Я-192	
22	УАЗ-452	8,40-15С	Я-245	35
		215/90-15С	Я-245-1	35
23	УРАЛ տարբեր մոդիֆիկացի- աների	1100x400-533	КАМА-401 Наташка	47
		1220x400-533	ИП-184, ИП-184-1	42
		14,00R20 (370x508)	ОИ-25	46
24	BMW տարբեր մոդիֆիկացի- աների	185/65R15, 195/65R15, 205/60R14		35
25	BYD տարբեր մո- դիֆիկացիաների	195/60R15, 195/65R15		28
26	Chevrolet տար- բեր մոդիֆիկա- ցիաների	195/70R14, 185/70R14, 235/55R15		35
27	Daewoo տարբեր մոդիֆիկացիա- ների	175/70R13, 185/65R14		32
28	Ford տարբեր մոդիֆիկացիա- ների	175/70R13, 185/65R13, 185/65R14, 185/70R14, 185/75R14, 195/70R14, 205/70R15C, 225/70R16C, 225/75R16C		39
29	Hyundai տարբեր մոդի- ֆիկացիաների	185/65R15, 195/65R15, 195/70R14, 195/75R14, 205/55R16, 205/60R15, 205/65R15, 215/60R16, 215/65R16, 215/70R16, 215/70R16C, 225/55R18, 225/60R17, 235/60R16, 235/60R18, 235/65R17, 245/65R17, 245/60R18, 255/55R18		28

30	Honda տարբեր մոդիֆիկացիաների	185/70R14, 205/65R14, 185/65R15, 195/60R15, 185/65R15, 205/65R15		35
31	Isuzu տարբեր մոդիֆիկացիաների	215/75R17.5 215/85R-16E 225/70R-19.5F		35
32	Jac տարբեր մոդիֆիկացիաների	7,00R16		35
33	Kia տարբեր մոդիֆիկացիաների	165/70R13, 175/70R13, 195/75R14		32
34	Mersedes Benz տարբեր մոդիֆիկացիաների	185/70R14, 195/65R14, 195/75R14, 195/65R15, 205/60R15, 205/65R15		35
		9R22,5	133/131K	50
35	Mitsubishi տարբեր մոդիֆիկացիաների	205/80R16, 260/60R18		35
36	Nissan տարբեր մոդիֆիկացիաների	215/60R17		30
37	Opel տարբեր մոդիֆիկացիաների	185/70R14, 195/70R14, 225/70R15, 225/75R16, 235/75R16		42
38	Saab տարբեր մոդիֆիկացիաների	185/65R15, 195/60R15, 205/65R15		28
39	Renault տարբեր մոդիֆիկացիաների	175/70R13, 195/65R14		39
40	Toyota տարբեր մոդիֆիկացիաների	165/70R13, 165/70R14, 175/70R13, 185/70R14, 195/65R15, 195/70R14, 185/80R14, 205/55R16, 205/60R15, 215/70R16, 225/45R17, 265/65R17, 285/60R18		35
41	Volkswagen տարբեր մոդիֆիկացիաների	165/70R13, 175/70R13, 185/65R14, 185/70R14, 195/70R15, 195/75R16, 205/70R14,		39

		205/55R16, 225/75R16		
42	Volvo տարբեր մոդիֆիկացիա- ների	185/60R15, 185/65R15, 185/70R15, 195/70R15, 205/65R15		35

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2018թ.

N 264-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 378 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Դաշուշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0983 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Դաշուշենի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2018թ.

N 265-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Սարոյան փողոցի թիվ 24/1 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 0,085042 հեկտար էներգետիկայի օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2018թ.

N 266-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Սարոյան փողոցի թիվ 24/4 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 0,085781 հեկտար Էներգետիկայի օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2018թ.

N 270-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 918-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջեռուցման օրերի առավելագույն քանակ սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 765-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 918-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1¹-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1¹. Սահմանել Արցախի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող Ստեփանակերտի նախադպրոցական հիմնարկներում, Արցախի Հանրապետության Շահումյանի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Հադրութի և Քաշաթաղի շրջանների՝ սույն որոշման հավելվածում չնշված բնակավայրերում՝ 2017-2018 թվականներին Արցախի Հանրապետության շրջանների հիմնարկների ջեռուցման օրերի առավելագույն քանակ՝ անկախ ջեռուցման համար օգտագործվող էներգիայի աղբյուրից՝

1) Ստեփանակերտ քաղաքի նախադպրոցական հիմնարկների համար՝ տարեկան 145 օր.

2) Շահումյանի շրջան՝ տարեկան 151 օր.

3) Ասկերանի շրջան՝ հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 138 օր.

4) Մարտակերտի շրջան՝ հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 139 օր.

5) Մարտունու շրջան՝ հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 138 օր.

6) Հադրութի շրջան՝ հավելվածում չնշված Հադրութ քաղաքում, Ազոխ և Դրախտիկ գյուղերում՝ տարեկան 146 օր.

7) Քաշաթաղի շրջան՝ հավելվածում չնշված բնակավայրերում՝ տարեկան 129 օր:».

2) 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էկոնոմիկայի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2017 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ